

Թիւ 1238  
Մայիս 2, 1960

Բարեջնորհ  
Արտաշէս Արկ. Դաւիթեան  
Նախագահ Միական Խորհուրդի  
Պրերկըն Բառնդիի Հայց. Եկեղեցւոյ Համայնքին

Սիրելի Տիրացու Արտաշէս,

Ստացած ենք 1960 Ապրիլ 27 թուակիր ձեր տեղեկագիրը, որով  
կը տեղեկացնէք ձեր նախագահութեամբ փետրուար 28ին գումարուած ծը-  
խական ժողովին մէջ ընտրուած են Միական Խորհուրդի նոր անդամները,  
եւ ներկայացնելով ընտրութեան արդիւնքը, կը խնդրէք ընտրուած ան-  
ձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ վերոյիշեալ անձերը ըստ օրինի ընտրու-  
ուած են եւ իբրեւ եկեղեցւոյն պարտաճանաչ անդամներ կը վայելեն  
ընտրողներու վստահութիւնը, այսու կը վաւերացնենք անոնց ընտրու-  
թիւնը հետեւեալ կարգով.-

- Տիարք՝ Ստեփան Անանեան
- Ռիչըրտ Թոնամեան
- Ճէզ Զարշահեան
- Անթրնի Անէմեան
- Գառնիկ Մահպաղեան

Կ'օրհնենք նորընտիր անդամները եւ կը մաղթենք ձեզի ու  
պատուարժան Միական Խորհուրդիդ համերաշխ ու բեղմնաւոր գործու-  
նէութիւն ի պայծառութիւն Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ եւ յօգուտ մեր  
սիրեցեալ ժողովուրդին:

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ  
եւ օրհնութեամբ  
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի